# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐՈՒՄ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, 10-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 53-Ն որոշումը՝

**Որոշում եմ.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքապետարանների աշխատակազմերում տնօրինվող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ**

**2024 թվականի հոկտեմբերի 31**

**ք.Աշտարակ**
**N 498-Ա**

| | | |
|---|---|---|
| (14) | աստիճանի մասին տեղեկությունները<br>-մարզի մասշտաբով<br>-նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |
| **2.ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| 6<br>(20) | Հայաստանի Հանրապետությունը հնարավոր զինված հարձակումներից պաշտպանելու վերաբերյալ նախապատրաստական ծրագրերի բովանդակության, ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի արտադրության, նորոգման գծով արդյունաբերական մոբիլիզացիոն կարողությունների, ռազմական հումքի ու նյութերի պահեստավորման և մատակարարումների ծավալի, նյութական՝ պետական, զորահավաքային և ռազմավարական պահուստների կառուցվածքի, փաստացի չափի և դրանց տեղաբաշխման մասին տեղեկությունները<br>-մարզի մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |
| 7<br>(24) | Քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների, վարչական շենքերի պաշտպանվածության ու բնակչության անվտանգության ապահովվածության աստիճանի, տարհանման երթուղիների և տեղաբաշխման վայրերի ու դրանց հնարավորությունների մասին տեղեկություններ<br>-մարզի մասշտաբով<br>-նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |
| 8<br>(25) | Քաղաքացիական պաշտպանության պլանների մասին տեղեկությունները<br>-մարզի մասշտաբով<br>-նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |
| 9<br>(26) | Հայաստանի Հանրապետության պետական, զորահավաքային, ռազմավարական պաշարների պահուստի, դրա ֆինանսների և բյուջետային քաղաքականության (բացի տնտեսության և ֆինանսների ընդհանուր վիճակը բնութագրող ամփոփ ցուցանիշներից) մասին տեղեկությունները<br>-մարզի մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |
| 10<br>(27) | Տնտեսության զորահավաքային ծրագրերի և պլանների մասին տեղեկությունները<br>-մարզի մասշտաբով<br>-նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |
| 11<br>(30) | Ընդհանուր օգտագործման, ռազմավարական նշանակության հումքերի, նյութերի, դրանց ստեղծման, արտադրության և զարգացման, զորահավաքային հզորությունների վերաբերյալ տեղեկությունները<br>-մարզի մասշտաբով<br>-նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |
| 12<br>(32) | Տրանսպորտային միջոցների զորահավաքային պահանջարկը, այդ թվում՝ տրանսպորտի առանձին տեսակների և դրանցով զորահավաքային ապահովվածությունը բացահայտող տեղեկությունները<br>-մարզի մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի
2024թվականի հոկտեմբերի 31-ի N 498-Ա որոշման

# ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐՈՒՄ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| N/N Հ/Հ | Գաղտնագրման ենթակա տեղեկության անվանումը | Գաղտնիության աստիճանը |
|---|---|---|
| | **1.ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | |
| 1<br>(1) | Զինված ուժերի և այլ զորքերի ռազմավարական, օպերատիվ և մարտավարական բնույթի պլանների և ծրագրերի, ըստ ռազմական գործողությունների ձևերի զորքերի, ներառյալ աշխարհազորի և տարածքային պաշտպանության վերաբերյալ տեղեկությունները<br>-մարզի մասշտաբով<br>-նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |
| 2<br>(6) | Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի զորքերի ծավալման, մարդկային և տրանսպորտային ռեսուրսների զորահավաքի անցկացման, զորահավաքի ծավալումը կառավարելու համակարգի և անձնակազմով համալրելու հնարավորությունների մասին, սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և այլ նյութական ֆինանսական միջոցներով, ինչպես նաև ռազմական փոխադրումներով ապահովելուն վերաբերող տեղեկությունները<br>-մարզի մասշտաբով<br>-նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |
| 3<br>(9) | Զինված ուժերի, այլ զորքերի և քաղաքացիական պաշտպանության ուժերի տեղաբաշխումը, իրական անվանումները, կազմակերպչական կառուցվածքը, սպառազինությունը ապահովման և մարտունակության վիճակը, անձնակազմի, տրանսպորտային միջոցների, տեխնիկական այլ միջոցների (վառելիքաքսուկային և այլ միջոցների) թվաքանակը բացահայտող տեղեկությունները, բացահայտմամբ, երբ նշված տեղեկությունները ենթակա են հրապարակման՝ ՀՀ միջազգային պարտավորությունների համաձայն<br>-մարզի մասշտաբով<br>-նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |
| 4<br>(12) | Հատուկ պահպանվող և մուտքի ու ելքի հատուկ կարգ ունեցող օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանության ու պատրաստականության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու մասին տեղեկությունները<br>-մարզի մասշտաբով<br>-նույն տեղեկությունները՝ համայնքների մասշտաբով | ԳԱՂՏՆԻ |
| 5 | Ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության | |